

ՀՏԴ 342.6

**«ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ»  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

**ՄԱՐԻՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան*

Պետական իշխանության մարմինների գործունեությունը հաճախ ենթարկվում է քննադատության, և որպես կանոն քննադատության ողջ ալիքը հասնում է հենց գործադիր իշխանության մարմիններին: Կառավարչական համակարգերից՝ որպես պետության քաղաքականության գլխավոր շարժիչ ուժի, հարկատուները իրենց ազատությունների և բարեկեցության բարելավումն են ակնկալում, իսկ պետական-գործադիր մարմինների գործողությունները միշտ չէ, որ հանգեցնում են դրան:

Անտարբեր մարդիկ չկան. բոլորը փորձում են առաջարկել գործադիր իշխանության կազմակերպման բարելավման ուղղությամբ որոշումներ, բանավիճում են, բարեփոխումներ իրականացնում, ցույցեր կազմակերպում, և ի վերջո, բոլոր այդ գործողությունները շոշափում են պետական իշխանության արդյունավետության թեման: Արդյունքում, հաճախ բավականին դժվար է լինում հետազոտության համար կայուն հիմք առանձնացնել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հոդվածում առաջին հերթին ներկայացվում է հենց «գործադիր իշխանություն» ինստիտուտի հասկացության սահմանումը, ինչից հետո հնարավոր է դառնում պետական իշխանության արդյունավետությունը ուսումնասիրել համակարգային մոտեցման շրջանակներում, ի վերջո սահմանել «գործադիր իշխանության արդյունավետություն» հասկացությունը:

**Բանալի բառեր.** պետական իշխանություն, գործադիր իշխանություն, արդյունավետություն, համակարգային մոտեցում:

Արդյունավետ իշխանության ուսումնասիրման վերաբերյալ ժամանակակից փորձը և հիմնարար հետազոտությունները հաշվի առնելով՝ անհրաժեշտություն է առաջանում հասկացության հայեցակարգման համար դիտարկել որոշակի պայմաններ:

**Առաջին** հերթին արդյունավետ իշխանության մասին խոսելու փորձերը դատապարտված են կամ մնալ տեսական դատողություններ, որոնց հնարավոր չէ ստուգել քաղաքական գիտության տեսական մեթոդների շնորհիվ, կամ կարող են հանգեցնել արդյունավետության հետ ոչ միայն անուղղակիորեն կապված, այլև հենց արդյունավետություն հանդիսացող մեծությունների սխալ չափման և օպերացիոնալացման խնդիրների: Դեռևս

անտիկ շրջանի մտածողներն էին ընդունում իշխանական համակարգի համալիր բնույթը. գաղափար, որը հետագայում հանգեցրեց իշխանությունների տարանջատման սկզբունքին և քաղաքական համակարգերը՝ որպես ինստիտուտների համակցությամբ դիտարկելու անհրաժեշտությանը [1]: Հենց քաղաքական համակարգերի կառուցվածքի և խնդիրների բազմակողմանիության պատճառով է, որ անհնար է խոսել իշխանության արդյունավետության մասին. դժվար թե անգամ առանձին պետություններ ուսումնասիրող քեյս ստադիի շրջանակներում կամ տարբեր գործոններով պայմանավորված արդյունավետ իշխանության պատճառական կապերի լիարժեք գիտական հետազոտության հիման վրա հնարավոր լինի հաշվի առնել արդյունավետության վրա ազդեցություն ունեցող բոլոր գործոնները, օրինակ՝ նպատակադրումների արդյունավետությունը, նպատակների հասնելու արդյունավետությունը, կառավարչական կառուցվածքի արդյունավետությունը, քաղաքական պարտականությունների կատարումը կամ կառավարչի անձնական հատկանիշները: Այդ պատճառով առավել նպատակահարմար է իշխանության առանձին ճյուղերի կամ իշխանական կառույցների առանձին համալիրների ուսումնասիրումը: Նման մոտեցումը հնարավորություն կտա քաղաքական ցուցանիշների փոխկապակցվածության մասին ոչ միայն առանձին վարկածներ առաջ քաշել, այլև ընդհանրացնել ստացված արդյունքների ստուգումները բոլոր քաղաքական համակարգերի վրա:

**Երկրորդ՝** հաշվի առնելով այն, որ «արդյունավետություն» հասկացությունը ինքնին տնտեսագիտական ծագում ունի, հետազոտողը որոշակի հայեցակարգային շրջանակների մեջ է հայտնվում. արդյունավետության մասին դատողությունները անվերապահորեն կապված են լինելու արտադրողականության հետ, այսինքն՝ ուսումնասիրվող օբյեկտի ունակությանը հասնելու արդյունքի պաշարների նվազագույն ծախսով: Իր հերթին նման տրամաբանությունը պարտադրում է արդյունավետությունը դիտարկել որպես հարաբերական միավոր. տնտեսագիտական տեսանկյունից սխալ է այն հարցադրումը թե որքանով է տվյալ կազմակերպությունը արդյունավետ, առավել նպատակահարմար է «կազմակերպություններից ո՞րն է առավել արդյունավետ» հարցադրումը, քանի որ «արդյունավետությունը չափման միավոր չունի, հասկացության իմաստը բացահայտվում է միայն, երբ համեմատում ենք մի պետությունը մեկ այլ պետության հետ կամ երբ համեմատում ենք տվյալ պետությունը տարբեր ժամանակաշրջաններում» [2]:

**Երրորդ՝** քանի որ խոսքը ծախսերի և արդյունքների հարաբերակցության մասին է, «արդյունավետություն» հասկացությունն առաջին հերթին վերաբերում է հենց գործադիր իշխանությանը: Եվ իսկապես, հենց գործադիր իշխանությունն է, որ թույլ է տալիս խոսել արդյունավետության մասին ծախսերի և արդյունքների հարաբերակցության տերմինների շրջանակներում, չնայած որ հնարավոր է նաև օրենսդիր և դատական մարմինների աշխատանքի արդյունքավետության չափումը, սակայն այդ դեպքում դրանց արդյունավետությունը նորմատիվ բնույթ կկրի՝ հենվելով ի սկզբանե քաղաքական նպատակադրման գաղափարախոսության գործընթացի վրա: Գործադիր իշխանությունն էլ ավանդաբար ներկայացվում է որպես հասարակական բարիքների աղբյուր և ինստիտուտ, որը պատասխանատու է պետության արդյունավետ գործառնման համար:

Պետական իշխանության գործադիր բնույթը հստակեցրել է գերմանացի փիլիսոփա Հեգելը, ով խոսելով իշխանության մասին նշում էր. «հատուկ ուղրտներն ու առանձին դեպքերը հարմարացնել համընդհանուրին» [3]: Օրենսդրությունը չի ընդգրկում տվյալ կյանքի ողջ բազմազանությունը, այդ պատճառով պարունակում է վերացական նորմեր: Գործադիր իշխանության մարմինների խնդիրն է, հենվելով այդ նորմերի վրա, կառավարել քաղաքական իրականության պայմաններում: Ընդ որում՝ խնդիրները հանգում են ոչ միայն նորմատիվ ակտերի իրականացմանը, այլ նաև հնարավորություն է ընձեռում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ:

Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ գործադիր իշխանությունը մեկնաբանվում է որպես պետական իշխանության գործառնության թաղադրատարր, որը իրականացվում է հետևյալ մակարդակներում.

1. օրենքները կյանքի կոչելու ուղղությամբ՝ պետության գործունեության իրականացում. գործառույթ, որը որոշակիացվում է իշխանությունների տարանջատման սկզբունքի շրջանակներում,
2. կազմակերպչական և վարչական միջոցառումների անցկացում, որոնք հիմնականում իրականացվում են նորմատիվ իրակավական ակտերի հրապարակմամբ [4]:

Այնուամենայնիվ, ելնելով վերոգրվածից և գրականության մեջ առկա ստուգաբանական նյութերից, կարող ենք տալ «գործադիր իշխանություն» ինստիտուտի հասկացության ինստիտուտի հասկացության սահմանում:

*Պետության գործադիր իշխանությունը պետական իշխանության գործառնության թաղադրատարրն է պաշտոնական քաղաքական նորմերի կիրառման, ինչպես նաև օժանդակ նորմատիվ իրավական ակտեր հրապարակման և քաղաքական կուրսի իրականացման ապահովման ուղղությամբ:*

Պետական իշխանության գործադիր թևը ինստիտուցիոնալ առումով ընդհանրացված պետական իշխանության գործադիր գործառության թաղադրատարրն է:

Հայտնի է, որ պետական իշխանությունը արտահայտում է հետևյալ հարաբերությունը «մարդու գերակայությունը մարդու նկատմամբ»: Քաղաքական գերակայության և քաղաքական ենթարկվածության պարբերական փոխգործակցությունն անհնար է առանց գերակայություն – ենթարկվածություն քաղաքական հարաբերությունների ինստիտուցիոնալացման, դրանց ամրապնդման հասարակության գիտակցության, նորմերի մեջ: Դրա համար սոցիումի կառավարող և ոչ կառավարող հատվածի միջև առկա իշխանության կայունության պահպանումը պետք է իրականացնի *պետությունը*: Իսկ պետական իշխանության գործադիր սեկտորի համար պետք է պատասխանատու լինի՝ գործադիր իշխանության ինստիտուտը:

Գործադիր իշխանության ինստիտուտը հասարակական հարաբերությունների կառուցման ինքնավերարտադրվող ձև է, որը իրականացնում է գործադիր իշխանությունը և ապահովում հասարակության գործառույթացումը:

Ինչ վերաբերում է իշխանության արդյունավետության ուսումնասիրմանը, ապա, այն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե նորմատիվ շրջանակներում, այլ արդյունավետության՝ որպես սոցիալ-քաղաքական համակարգի բնութագրող հատկանիշ և տարբեր պետությունների «հաջող» զարգացումը բացատրող ինստիտուցիոնալ գործոնների միջև պատճառահետևանքային կապի պոզիտիվ վերլուծություն: Նման հետազոտության կենտրոնում պետք է լինի հենց գործադիր իշխանությունը, իսկ որպես արդյունավետության չափիչ՝ որևէ հարաբերական մեծություն, որը չունի չափման միավոր և չի ենթադրում հասարակական – պետական համակարգերի համալիրից դուրս առանձին համակարգի դիտարկում:

Արդյունավետության ուսումնասիրման պոզիտիվ վերլուծության հայեցակարգային շրջանակները սկիզբ են առնում դեռևս Դեյվիդ Իստոնի՝ համակարգային վերլուծության վերաբերյալ աշխատություններում: Իր «Քաղաքական համակարգ» աշխատության մեջ Իստոնը նշել է, որ քաղաքական կյանքի կողմերից և ոչ մեկը չի կարող դիտարկվել մյուս կողմերից անջատ [5]:

Դիտարկելով քաղաքական համակարգը որպես ամբողջություն՝ առաջին հերթին հնարավոր է դառնում անջատել քաղաքական գործընթացները «շրջակա միջավայրից» (քաղաքական գործընթացները ընդհանրապես՝ ուղղակիորեն ռեսուրսների վերաբաշխման և իշխանական

որոշումների ընդունման հետ չկապված) [5, p. 96-99], իսկ երկրորդ՝ դիտարկել դրա գործառնման կառուցակարգերը քանակական տեսանկյունից: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս քաղաքականության ուսումնասիրման կենտրոնը դարձնել ոչ թե արժեքային չափանիշները, որոնք ունեն մշակութային և պատմական նախադրյալներ, այլ օգտագործել ընդհանրական չափանիշներ: Իշխանության արդյունավետության վերլուծության տեսանկյունից սա նշանակում է անցում արդյունավետության առավել գործիքակազմային բնորոշումների:

Իր առաջ քաշած ձևաչափում Իստոնը քաղաքական համակարգը դիտարկում էր որպես «սև արկղ», որի գործառնման կառուցակարգերի մասին տեղեկությունները բավականին սահմանափակ են: Համակարգի կողմից կիրառվող հասարակական պաշարները և հասարակական կարծիքը ընդունված է անվանել «մուտքի» ձևաչափեր, իսկ համակարգի կողմից իրականացվող կառավարչական որոշումները և քաղաքական կուրսը՝ «ելքի»: Դրա հետ մեկտեղ նշված ձևաչափը հաշվի է առնում «մուտքի» և «ելքի» միջև առկա փոխադարձ կապերը, որտեղ առաջիններն ազդում են երկրորդների մակարդակի վրա, այն դեպքում, երբ հասարակության մեջ հետադարձ կապի կառուցակարգերն ապահովում են «ելքերի» ազդեցությունը «մուտքերի» հետագա մակարդակի վրա: Բացի այդ, քաղաքական համակարգը, լինելով հասարակական համակարգի մաս, գործառում է ոչ թե մեկուսացված, այլ որոշակի արտաքին պայմանների շրջանակներում, որոնք ևս ազդեցություն ունեն դրա գործառնման վրա:

Իստոնի կողմից առաջ քաշված տեսական շրջանակները հնարավորություն են տալիս պատասխանել մեկ կարևոր հարցի, որին բախվում են արդյունավետության ուսումնասիրողները, այն է՝ ո՞րն է արդյունավետ իշխանության կատարյալ ձևաչափը: Նախկինում գոյություն ունեցող մոտեցումների շրջանակներում այս հարցը լուծել հնարավոր չէր, քանի որ արդյունավետության հասկացությունը հանգում էր միայն իշխանության կողմից իր առջև դրված խնդիրների հաջող լուծմանը:

Մյուս կողմից համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս ուսումնասիրել քաղաքական համակարգի քանակական բնութագրիչները և այդպիսով մշակել արդյունավետության տեսական ցուցանիշներ, ինչպես նաև համակարգային վերլուծության շրջանակներում հնարավոր է դառնում ոչ թե քաղաքական համակարգի ամբողջությամբ դիտարկել, այլ դրա առանձին տարրերը՝ իհարկե հաշվի առնելով արտաքին միջավայրը և դրա փոխազդեցությունն այլ տարրերի հետ: Այսպիսով, նման մոտեցման դեպքում հնարավոր է դառնում համեմատել ուսումնասիրվող համա-

կարգի բնութագրիչները ոչ թե ինչ-որ կատարյալ համակարգի բնութագրիչների հետ, այլ կենտրոնանալ համակարգային բնութագրիչների և քաղաքական գործունեության արդյունքների միջև օբյեկտիվ փոխադարձ կապի որոնման վրա:

Այս իմաստով՝ քանակական հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս քաղաքական ոլորտում վեր հանել ոչ միայն օրինաչափությունները, այլ նաև ձևակերպել արդյունավետ իշխանության կատարյալ բնութագրիչներ՝ հաշվի առնելով քաղաքական համակարգի և արտաքին պայմանների հատկությունները: Ուսումնասիրելով իշխանության արդյունավետությունը Դ.Իստոնի առաջարկած քաղաքական համակարգի ձևաչափի պրիզմայի միջով անհրաժեշտ է լինում հստակեցնել շրջանակները, անհրաժեշտություն է առաջանում ֆորմալիզացնել պետության մեջ առկա քաղաքական գործընթացները, այդ թվում նաև քաղաքական կուրսի ձևավորումը, հասարակության պահանջների ընկալումները՝ հետադարձ կապի միջոցով, ինչպես նաև նման կապերի աշխատելու սկզբունքները: Բացի դրանից բավական դժվար է ձևակերպել համալիր ձևաչափ՝ այս գործընթացները միավորելով:

Մյուս կողմից Դ.Իստոնի առաջ քաշված ձևաչափի կառուցվածքային տարրերից յուրաքանչյուրը կարող է դիտարկվել որպես քաղաքական համակարգի ենթահամակարգ, ինչը թույլ կտա կառուցել լոկալ ձևաչափ, որը հաշվի կառնի կոնկրետ քաղաքական գործընթացի հիմնական բնութագրիչները, դրա կապը արտաքին միջավայրի, ինչպես նաև տեղը ընդհանուր ձևաչափում: Նման լոկալ ձևաչափերը հիմնվելու են քաղաքական գործընթացների գործառնման տեսական հասկացությունների վրա և հաշվի են առնելու որքանով են ինստիտուտները իրականացնում իրենց առջև դրված նպատակները: Այդպես, հասարակության պահանջարկների և աջակցության կառուցակարգերի՝ քաղաքական համակարգի՝ որոշումների ընդունման համար պատասխանատու տարրերի տրանսֆորմացիան ուսումնասիրվում է տեսական խաղերի [6] և տարածական ձևաչափեր [7] շրջանակներում, որտեղ առաջիններն արդյունավետությունը վերլուծում են իրենց խնդիրների իրականացումը՝ ընտրության կառուցակարգերի տեսանկյունից, երկրորդները՝ աջակցության մաքսիմալացման տեսանկյունից: Որոշումների ընդունման դինամիկ ձևաչափի արդյունավետությունը ինչպես նաև հասարակության հետ հետադարձ կապի կառուցակարգը, հիմնված հասարակության ներուժի վերաբաշխման վերաբերյալ կառավարչական որոշումների վերլուծության վրա առաջարկվել է Ախրեմենկոյի կողմից [8], ինչպես նաև որոշ արևմտյան հեղինակների

կողմից [9], [10]: Վերոնշված ձևաչափերը հնարավորություն են տալիս արդյունավետության մասին ավելի ընդհանրական պատկերացում կազմել, ինչպես նաև ձևակերպել արդյունավետության համալիր հասկացությունը: Իշխանության արդյունավետության ուսումնասիրման ժամանակ ուշադրության կենտրոնում է Դ. Իստոնի առաջ քաշված ձևաչափի ենթահամակարգերից մեկը: Քանի որ մեկ միասնական ձևաչափի շրջանակներում ողջ քաղաքական համակարգի ֆորմալացումը բարդ է, ուստի դիտարկում ենք համակարգի միայն մի մասը, որը փոխկապակցված է համակարգի մնացած տարրերի և ընդհանուր հասարակական համակարգի հետ: Այդպիսով՝ իշխանության արդյունավետության կարևորագույն հատկություններից է դրա հասարակական-քաղաքական բնույթը և պետություն-հասարակություն փոխգործակցության համատեքստում այն դիտարկելու անհրաժեշտությունը:

Որպես ուսումնասիրման առարկա դիտարկվում են պետության քաղաքական համակարգի անկողմնակալ բնութագրիչները, որոնք կարգավորում են դրա գործունեությունը ընտրված ենթահամակարգի շրջանակներում: Քաղաքական համակարգի գործունեությունը դիտարկվում է որպես գործընթաց, որի ընթացքում հասարակական ներուժը (Դ. Իստոնի ձևաչափում հասարակական աջակցությունը) վերածվում է հասարակական կարևորություն ունեցող արդյունքի (հասարակական բարիք), դրան զուգահեռ սահմանվում են կանոններ, որոնք կարգավորում են այդ գործընթացը, ինչպես նաև հսկողության կառուցակարգեր: Այսինքն՝ քաղաքական համակարգում տեղի ունեցող գործընթացները, իրենց իմաստով համապատասխանում են իշխանության երեք ճյուղերի գործառնմանը: Առավել նմատակահարմար է հենց գործադիր իշխանության ուսումնասիրումը, քանի որ ի տարբերություն իշխանության մյուս ճյուղերի, դրա համար հնարավոր է առանձնացնել ձևաչափի հիմնական բաղադրարարիչները, որոնք հատուկ են համակարգային մոտեցմանը. Ելքեր, մուտքեր, ինչպես նաև մուտքերի՝ ելքերի փոխակերպման կառուցակարգեր:

Հետևելով Իստոնի օրինակին, Գ. Ալմոնդը ևս փորձեց վերջինիս վերլուծության համակարգը կիրառել ազգային քաղաքական համակարգերի նկատմամբ: Գ. Ալմոնդը ևս քաղաքական համակարգը դիտարկում է միաժամանակ և որպես ինքնառեֆերենտ, և որպես «գլոբալ» սոցիալական համակարգի բաղադրատարր, որը կապված է որոշակի տարածքային միավորումի մեջ օրինական ֆիզիկական հարկադրանքի գործադրման մենաշնորհի հետ: Ղեկավարվելով Թ. Պարսոնսի և Ռ. Մերտոնի կառուցվածքային ֆունկցիոնալիզմի հիմնական դրույթներով և հասկացություն-

ներով՝ նա դրանք տեղափոխում է քաղաքական դաշտ, դիտարկելով, որպես համակարգ, որը բաղկացած է կառույցներից, դերերից և գործառույթներից, այլ ոչ թե ինստիտուտներից և կազմակերպություններից, ինչպես նախկինում: Ըստ Գ.Ալմոնդի՝ կառուցվածքը դիտարկման հասանելի գործունեություն է, որը ձևավորում է քաղաքական համակարգը կամ փոխգործակցության ձևաչափը, որն էլ սահմանվում է քաղաքական դերերի համադրության միջոցով: Քաղաքական դերը «համակարգի առաջնային միավորն» է [11], քաղաքական գործընթացում ներգրավված մարդկանց հատուկ գործողությունները: Քաղաքական համակարգը, ինչպես և սոցիալական համակարգը մի շարք անհրաժեշտ գործառույթային (ֆունկցիոնալ) պահանջներ ունի, որոնք ապահովում են դրա գործառույթում ու զարգացումը: Հետևաբար գործառույթը՝ ցանկացած գործողություն է՝ («դիտարկված հետևանք») ուղղված համակարգի կայուն վիճակի պահպանմանը: Կամ դա այն կառուցակարգն է, օրինաչափություն, որի միջոցով պահպանվում է համակարգի տարրերի միջև կապը: Եվ քանի որ քաղաքական համակարգում բոլոր ներքին միջկառուցվածքային փոխազդեցություններն իշխանական են, գործ ունենք «գործառույթ» և «ուժ» հասկացությունների հարաբերակցության հետ: Բացի այդ, գործառույթները քաղաքական համակարգերի կայունությունն ապահովող հաստատուններն են, քանի որ համակարգում միշտ առկա են մի քանի օղակներ, բայց բոլորն էլ ուղղված են որոշակի հաստատուն (կոնստանտ) գործառույթների իրականացմանը: Այսպիսով՝ ազգային քաղաքական համակարգերը վերլուծելու և համեմատելու համար անհրաժեշտ է կենտրոնանալ դրանց կառուցվածքային և ֆունկցիոնալ բաղադրիչի վրա: Լուծելով այս խնդիրը՝ Գ. Ալմոնդը քաղաքական համակարգում առանձնացնում է երեք մակարդակ: **Առաջին** մակարդակում նա համակարգը ընդհանուր առմամբ նկարագրում է օգտագործելով Դ.Իստոնի հասկացությունները՝ ինչպես քաղաքական համակարգի «մուտքի», այնպես էլ «ելքի» ժամանակ, և հետադարձ կապ ապահովում սոցիալականացման, հավաքագրման և հաղորդակցության գործընթացների միջոցով, որոնք իրենց համալիրում ապահովում են քաղաքական հարաբերությունների վերարտադրությունը: **Երկրորդ** մակարդակը՝ քաղաքական գործընթացն է, որտեղ «մուտքերը» (պահանջներ և աջակցություն) վերածվում են «ելքերի» (որոշումների և գործողությունների): Այս մակարդակում Գ. Ալմոնդը և Բ. Փաուելը հաշվի են առնում տրանսֆորմացիայի հինգ գործառույթ՝ քաղաքական շահերի և նախապատվությունների համատեղում և համախմբում, քաղաքական



կուրսի որոշում և իրականացում, ինչպես նաև քաղաքական փոխհարաբերությունների նորմերին և կանոններին համապատասխանության վերահսկում և արբիտրաժ: **Երրորդ** մակարդակը՝ պետական կառավարում (կամ քաղաքական կուրս), ցույց է տալիս քաղաքական համակարգի «մուտքի» և «ելքի» կարգավորիչ, էքստրակտիվ, բաշխիչ, ռեակտիվ և խորհրդանշական հնարավորությունները: Այս մակարդակում լուծվում են ոչ միայն համակարգային (հասարակական) ներուժի կառավարման խնդիրները, այլև համակարգի լեգիտիմության բարձրացման ու արտաքին և ներքին փոփոխություններին արագ արձագանքելու խնդիրները:

Գ. Ալմոնդը իր՝ քաղաքական համակարգի վերլուծության կառուցվածքային-գործառական ձևաչափի միջոցով փորձում է համատեղել մակրո- և միկրո մոտեցումները, այդ պատճառով նրա ձևաչափը կորցնում է իր կապը հասարակական-քաղաքական կյանքի իրական բովանդակության հետ՝ չափազանց մեծ շրջանակ ընդգրկելու և քաղաքականության բազմակողմ բացատրություն տալու փորձի պատճառով: «Համակարգային կառուցվածքային գործառման տեսությունը չի ապահովում մեթոդական հիմք՝ կոնկրետ քաղաքական իրավիճակները վերլուծելու համար (օրինակ՝ կոնֆլիկտը մարզպետի և օրենսդիր մարմնի միջև) և կանխատեսելու դրանց զարգացումը [11, էջ 75]: Բացի այդ, Ալմոնդի տեսությունը հնարավորություն չի տալիս դրա էմպիրիկ ստուգման համար:

Հիմնվելով իշխանության արդյունավետության էմպիրիկ ուսումնասիրությունների փորձի վրա, հնարավոր է դառնում առանձնացնել քաղաքական համակարգի արդյունավետության գործոնների մի քանի տեսակ, որոնք կարգավորում են դրա գործառման գործընթացը: Առաջին հերթին, դա հիմնարար հասարակական բնութագրիչներն են, որոնք քաղաքական համակարգի նկատմամբ արտաքին միջավայրն են կազմում՝ հասարակության և պետության մշակույթը և պատմությունը: Երկրորդ՝ դրանք քաղաքական համակարգի ֆորմալ բնութագրիչներ են, որոնք արտաքին միջավայր են հանդիսանում պետության ներսում առանձին քաղաքական գործընթացների համար՝ պետական կառուցվածքի ձև, ինստիտուտների և հասարակության զարգացվածության աստիճանը: Եվ ի վերջո, դա քաղաքական համակարգի նկատմամբ ներքին բնութագրիչներն են պետական կազմակերպությունների աշխատակիցների իրազեկվածությունը (կոմպետենտությունը) և հմտությունները, դրանց կառավարման կառուցվածքը: Այսպիսով՝ հաշվի առնելով վերոնշյալը, կարող ենք գործադիր իշխանության արդյունավետության հետևյալ ձևակերպումը տալ.

*Գործադիր իշխանության արդյունավետությունը «պետություն-հասարակություն» համակարգի քանակական բնութագրիչն է, որը ղեկավարում*

է պետական կազմակերպությունների կողմից հասարակական բարիքների բաշխման գործընթացը, ինչպես նաև ապահովում հասարակական կարևորություն ունեցող արդյունքի հասանելիությունը:

Առաջարկում ենք, գործադիր իշխանության հետազոտության ձևաչափի հետևյալ հայեցակարգային կառուցվածքը: Որպես ձևաչափի մուտք դիտարկվում է հասարակական ներուժը, որոնք անհրաժեշտ են հասարակական բարիքների արտադրման համար: Ելքի ձևաչափ են հանդիսանում պետական կազմակերպությունների կողմից արտադրված հասարակական բարիքները: Որպես արտաքին միջավայր դիտարկվում են այլ քաղաքական գործընթացներ՝ հասարակական գործընթացներ, որոնք ավելի հիմնարար բնույթ են կրում, ինչպես նաև դիտարկվում են նաև պետության և հասարակության միջև հետադարձ կապի կառուցակարգեր, որոնք արտադրված հասարակական բարիքների մակարդակը վերաժում են քաղաքական կուրսի հետագա աջակցման: Գործադիր իշխանության արդյունավետություն ասելով հասկանում ենք հասարակական բարիքների՝ սոցիալական կարևորություն ունեցող արդյունքի վերաժման գործընթացի քանակական բնութագրիչը:

Այսպիսով՝ Դ. Իստոնի կողմից առաջարկված համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս իշխանության արդյունավետությունը դիտարկել որպես քաղաքական համակարգի գործառությունը հստակեցնող անաչառ բնութագիր: Իշխանական կառույցների արդյունավետ աշխատանքը քաղաքական համակարգի միայն մի մասն է և պետք է դիտարկվի պետություն-հասարակություն համատեքստի շրջանակներում: Այդ տեսանկյունից առավել նպատակահարմար է հենց գործադիր իշխանության արդյունավետության ուսումնասիրումը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Руссо Ж. Ж.**, Об общественном договоре. Трактаты / Пер. с фр. - М.: "КАНОН-пресс", "Кучково поле", 1998
2. **Inklaar R., Timmer M.**, Capital, labor and TFP in PWT8.0. Groningen Growth and Development Centre, University of Groningen, 2013
3. **Гегель Г, В. Ф.**, Философия права. - Пер. с нем. / Ред. и сост. Керимов Д. А. и Нерсисянц В, С; Авт. вступ. ст. и примеч. Нерсисянц В. С. - М., 1990. С. 311
4. **Чиркин В. Е.**, Сравнительное государственведение : учеб. пособие Москва : Норма : ИНФРА-М, 2019. - 448 с. .
5. **Easton D.**, The Political System. An Inquiry into the State of Political Science, New York: Knopf, 1965.
6. **Карабекян Д. С.**, О манипулируемости  $q$ -Паретовских правил принятия решений. // Труды семинара «Математическое моделирование политических систем и процессов». Выпуск I. Под ред. А.С. Ахременко. М.: Издательство Московского университета, 2011
7. **Akhremenko A, Petrov A.** Efficiency, policy selection and growth in democracy and autocracy: A formal dynamical model // NRU Higher School of Economics. 2014. No. WP BRP 16/ PS/2014.
8. **Ахременко А. С.**, Оценка эффективности государственного сектора: теоретическая модель и методика измерения // Труды семинара «Математическое моделирование политических систем и процессов». Выпуск I. Под ред. А.С. Ахременко. М.: Издательство Московского университета, 2011, стр. 80-84
9. **Simar L., Wilson P.**, Estimation And Inference In Two-Stage, Semi-Parametric Models Of Production Processes // Journal of Econometrics. 2007. Vol. 136. Pp. 31–64.
10. **Cinzia Daraio, Léopold Simar, Paul W. Wilson** Central limit theorems for conditional efficiency measures and tests of the 'separability' condition in non-parametric, two-stage models of production // **The Econometrics Journal**, Volume 21, Issue 2, 1 June 2018, Pages 170–191
11. **Камалов М.М.** Системный структурный функционализм Габриэля Алмонда как методология сравнительного политического анализа // Вестник Московского университета. Серия 12. Политические науки. – 1997. – №6. – С. 71.

---

---

## КОНЦЕПТУАЛИЗАЦИЯ ПОНЯТИЯ «ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ»

МАРИНА МАРКАРЯН

---

*Երևանский государственный университет*

---

Результаты деятельности органов государственной власти часто подвергаются критике, причём, как правило, основной её объём приходится на учреждения исполнительной власти государства. От правительственных систем как от главных эффекторов политики государств люди-налогоплательщики зачастую ожидают повышения уровня своих свобод и благосостояния, а государственно -исполнительные действия не всегда приводят к такому повышению.

В результате - все пытаются предложить решения по улучшению организаций исполнительной власти: спорят, реформируют, митингуют, вызывают к народу, и всё это в конечном итоге затрагивает тему *эффективности* государственного исполнения. И подчас бывает очень сложно не только отфильтровать полезное знание в потоке дискуссий, но и найти стабильный фундамент для исследований.

Учитывая вышесказанное, в статье в первую очередь представлена концептуальное определение понятия института исполнительной власти, и после чего лишь возможно изучение эффективности государственного управления в рамках системного подхода, и в конце концов дать определение понятию «эффективность исполнительной власти».

**Ключевые слова:** государственная власть, исполнительная власть, эффективность, системный подход.

## CONCEPTUALIZATION OF THE EFFICIENCY OF EXECUTIVE POWER

MARINA MARGARYAN

---

*Yerevan State University*

---

Government performance is often exposed to criticism, and, as a rule, the latter's main targets are the institutions of the executive branch of the government. From governmental systems as from the main shapers of the state policy, taxpayers often expect an increase in their freedoms and welfare, and state-executive actions do not always lead to such an increase. As a result, everyone is trying to propose solutions for the improvement of executive organizations via debates, reforms, rallies, appeal to the people, and all this ultimately raises the issue of the effectiveness of state execution. Moreover, sometimes it can be very difficult not only to filter out the useful knowledge in a stream of discussions but also to find a stable basis for research.

Given the above, the article first provides a conceptual definition of the concept of the executive branch as an institute, and only then it is possible to study the effectiveness of public administration in the framework of a systematic approach, and finally give a definition of the term "efficiency of the executive branch".

**Keywords:** state power, executive branch, efficiency, systematic approach.

*Ներկայացվել է խմբագրություն 20.01.2020  
Երաշխավորվել է տպագրության 30.04.2020*